ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 10, 1958 Общественные науки

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Ֆ. Գրիգորյան

Ա. ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Սպենդիարյանի արխիվում, որը պահվում է Գրականության և արվեստի թանգարանում, կա մոտ 2000 նամակ, որոնցից լրիվ տպագրված է միայն 25—30 նամակ։ Սպենդիարյանի արխիվում պահվում են Սպենդիարյանի, Ռիմսկի Կորսակովի, Գլազունովի, Լյադովի, Արենսկու, Կյուիի, Հովհաննես Հովհաննիսյանի, Վարդգես Սուրենյանի, Յուրի Վեսելովսկու, Նիկողայոս Տիգրանյանի, Ռոմանոս Մելիքյանի նամակները։ Նամակների այդ ֆոնդից մեզ համար բնականաբար ամենամեծ արժեքը ներկայացնում են Սպենդիարյանի գրած նամակները, որոնց թիվը հասնում է միայն 110-ի՝ չնայած եղած նամակների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նա պատասխանել է ստացած համարյա բոլոր նամակներին։

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Սպենդիարյանի այն նամակները, որ նա գրել է Վարվառա Ապոլոնովնա Էբերլեին։ Նրա հետ կոմպոզիտորը հանդիպումներ է ունեցել Մոսկվայում 90-ական թվականներին՝ իր երիտասարդական շրջանում։

Էբերլեն եղել է երգչուհի. 1892-93 թթ. թատերաշրջանում երգել է Մոսկվայի Մեծ թատրոնում, հանդես գալով մի շարք գլխավոր դերերում։ Այսպես օրինակ, Չայկովսկու «Եվգենի Օնեգին» օպերայում նա կատարել է Տատյանայի և Դարգոմիժսկու «Ջրահարս» օպերայում՝ Նատաշայի դերերը։ 1894 թ. սկզբներից Էբերլեն եղել է Փարիզում և կատարելագործել ձայնը, միաժամանակ հանդես գալով ռուսական երգերի կատարմամբ և բալալայկայի նվագով։ 1897—98 թթ. թատերաշրջանում նա հանդես է եկել Շալյապինի հետ Ռիմսկի-Կորսակովի «Պսկովուհին» օպերայում։ Մամոնտովի մասնավոր թատրոնում Շալյապինը կատարել է Իվան Ահեղի, Էբերլեն՝ Օլգայի դերը։

Էբերլեն, Սպենդիարյանից բացի, բարեկամական հարաբերությունների մեջ է եղել Շալյապինի, Վրուբելի, Լևիտանի և Փոքր ու Գեղարվեստական թատրոնների մի շարք դերասանների հետ։

Մենք ընտրել ենք հատկապես Էբերլեին գրած նամակները, որովհետև նրանք ծանոթ չեն մեր երաժշտական հասարակայնությանը, չնայած այն բանին, որ բավական մեծ հետաքրքրություն են ներկայացնում։ Նրանք լույս են սփռում Սպենդիարյանի կյանքի մի շրջանի վրա, որի վերաբերյալ քիչ տվյալներ և փաստաթղթեր են պահպանվել։

Էբերլեին գրած նամակները թվով յոթն են. դրանք մենք հայտնաբերել ենք Մոսկվայում, ՍՍՌՄ-ի Երաժշտական կուլտուրայի կենտրոնական թանգարանում։ Երիտասարդական շնչով, նուրբ հումորով գրած այդ նամակները հիմնականում ցույց են տալիս, թե Սպենդիարյանին որքան հրապուրել էր Էբերլեն։

Ահա թե ինչ է գրում Սպենդիարյանն 1893 թ. հունիսի 4-ի իր նամակում.— «Ձեզ հետ ինձ նույնքան լավ էի զգում, որքան այստեղ իմ քույրերի և մորս հետ։ Լինում էր և ավելի լավ. դուք իմ մեջ ոչ միայն անկեղծ ընկերության զգացմունքներ առաջացրիք, այլև ինձ մղեցիք դեպի նոր ստեղծագործությունների կերտում»։

Իր ռոմանսներից մի քանիսը կոմպոզիտորը մի առանձին ու նվիրական սիրով ձոնել է Էբերլեին. այդ ռոմանսներից մեզ հասել են «Ես դեռ չեմ սիրում», «Էլ վաղուց ոչ մի հարց» լիրիկական ռոմանսները և Կոզլովի խոսքերով գրած էլի մի ռոմանս, որը մեզ չի հասել։ Սպենդիարյանի այդ շրջանում հորինած շատ ռոմանսներ առաջին անգամ կատարվել են Էբերլեի կողմից։ Սպենդիարյանի ռոմանսները Էբերլեն կատարել է՝ օգտվելով հեղինակի անմիջական ցուցումներից. օրինակ, 1893 թ. հունիսի 17-ի նամակում Սպենդիարյանը գրում է հետևյալը իր մի ռոմանսի կատարման մասին, որը մեզ չի հասել. «Կատարման համար դա առանձին դժվարություններ չի ներկայացնում. կա միայն մի անցում, որը փորր ինչ բարդ է իր անսպասելիության պատճառով։ Բայց մոդուլյացիային կարելի է արագորեն վարժվել, որ առանձնապես դյուրին կլինի Ձեզ համար, Ձեզ հատուկ երաժշտականության շնորհիվ... Ինչ վերաբերում է կատարման երանգներին, ապա խոսքերը և Ձեր սեփական հրաշալի զգացողությունը Ձեզ կթելադրեն, թե ինչպե՛ս է հարկավոր ֆրազավորել իմ ռոմանսը։ Միայն մի բան կարող եմ ասել. պետք է ավելի շատ թախիծ լինի առաջին երկու քառյակում և ավելի շատ կրակ և ուժ վերջիններում։ Երրորդ քառյակից սկսած, տեմպն ընթանում է ավելի արագ, եզրափակիչ նոտան պետք է ավելի երկար պահել։ Դա կարող է հնչել մինչև նվագակցության վերջը, բոլորովին չխախտելով հարմոնիան. ընդհակառակը դա գեղեցկություն կտա։

Աստվա՛ծ իմ, ինչքա՜ն երջանիկ կլինեի, եթե այս բոլորը կարողանայի Ձեզ ասել և Ձեր կատարմամբ լսել իմ ռոմանսները»։

Սպենդիարյանի ռոմանսներն Էբերլեն կատարել է երաժշտականորեն, կարողացել է ճշտորեն և հարազատորեն արտահայտել հեղինակի մտահղացումը։ 1893 թ. օգոստոսի 19-ի նամակում Սպենդիարյանը գրում է. «Ինձ համար շատ հաճելի է լսել, որ իմ ռոմանսները բոլորին դուր են գալիս և որ Դուք այդ ռոմանսները երգում եք հաջողությամբ»։

Չպետք է կարծել, որ Սպենդիարյանի վերաբերմունքը դեպի Էբերլեն մի էպիզոդիկ հափշտակություն է եղել։ Մյուս նամակները հաստատում են, թե ինչպիսի անկեղծ ու անմիջական հիշողություններով ու զգացմունքներով կապված է եղել Սպենդիարյանը երգչուհու հետ։ Այս բարեկամությունը անձնական մտերմության խնդիր չէր միայն, այլ ստեղծագործական հոգեհարազատության, ճաշակի ընդհանրության հետևանք, որ ամրապնդում էր նրանց մտերմությունը։

1893 թ. հունիսի 4-ի նամակում կարդում ենք. «Նոր էի եկել Սիմֆերոպոլ, երբ նոր ոգևշնչման հորդումն զգացի և հորինեցի մի ռոմանս Կոզլովի հիանալի խոսքերով։ Այս ռոմանսը ես ձոնում եմ Ձեզ, եթե միայն նրանք չեն ձանձրացրել Ձեզ։ Սակայն ի՞նչ արած, նորից նվիրում եմ «նրան, ով ոգևշնչել է ինձ»։ Մոտ օրերս ես Ձեզ կուղարկեմ այդ ռոմանսը, խնդրում եմ ներողամիտ լինեք և երգեք այն, եթե Ձեզ դուր գա։ Ես աշխատել եմ հարմարվել Ձեր ձայնին, Ձեր տեմպերամենտին, մտովի պատկերացրել եմ, թե Ձեր կատարմամբ ինչպես պետք է հնչի իմ ռոմանսի յուրաքանչյուր հնչյունը, և եկել եմ այն համոզմուն-

քին, որ այդ ռոմանսը Դուք կերգեք հրաշալի։ Հույս ունեմ, որ Դուք ձեր խոսքի տերը կլինեք և չեք ստիպի երկար ժամանակ գտնվել Ձեր պատասխանի տանջալից սպասումների մեջ։ Էլ չեմ ասում, թե որքան է հետաքրքրում ինձ Ձեր պատասխանը, որպիսի անհամբերությամբ պետք է սպասեմ նրան, այն ինձ որքան կուրախացնի»։

Կոզլովի բանաստեղծության խոսքերով գրած ռոմանսը, ինչպես նշեցինք, մեզ չի հասել։ Մեզ հասել է նույն բանաստեղծի խոսքերով գրած «Հրապուրել ես ինձ քո սև աչերը» ռոմանսը, որ գրվել և հրատարակվել է մինչև 1893 թ.։

Սպենդիարյանը, դեռևս բոլորովին երիտասարդ ստեղծագործող, կարիք էր զգում լսելու, թե ինչպես են ընկալում ուրիշներն իր գրածը. Էբերլեի կարծիքը նրան առանձնապես հետաքրքրում էր, որովհետև Էբերլեն արվեստագետ էր, վոկալիստ, հետևարար կարող էր ավելի շատ և ավելի ճիշտ զգալ ռոմանսների թե դրական, թե բացասական կողմը։

Սպենդիարյանը բարձր է գնահատել Էբերլեի կարծիքը իր ստեղծագործությունների մասին։ «Երբ աչքի կանցկացնեք իմ նոր ռոմանսը,— գրում է Սպենդիարյանը 1893 թ. հունիսի 17-ի իր նամակում,— խնդրում եմ հաղորդեք Ձեր կարծիքը, որն ինձ համար շատ թանկ է»։ Մի այլ նամակում. «...ստանալով Ձեր պատասխանը, ես անհապաղ Ձեզ երկրորդ նամակը գրեցի և ուղարկեցի երկու ռոմանս։ Իհարկե ինձ անչափ հետաքրքրում է այս ռոմանսների ճակատագիրը. արդյոք նրանք կհասնե՞ն Ձեզ, և Դուք ի՞նչպես կվերաբերվեք իմ նոր ստեղծագործություններին։ Որեք շարաթ անընդհատ ես ամեն օր անհամբեր Ձեզնից պատասխան էի սպասում, սակայն իզուր։ Հույսով եմ, որ Դուք այս նամակին կպատասխանեք և չեք ստիպի տանջվել պատասխանին սպասելով»։

Սպենդիարյանի նամակները ցույց են տալիս նաև, թե որքան լայն են եղել երիտասարդ Սպենդիարյանի հետաքրքրության սահմանները. նա իրեն չի սահմանափակել միայն երաժշտական բնագավառով, հետաքրքրվել է նաև թատրոնով, գրականությամբ և այլն։

Այս նամակներում Սպենդիարյանը հայտնում է այն ուժեղ տպավորության մասին, որ թողել էր ռուս հռչակավոր դերասանուհի Սավինայի խաղը։ Այդ տպավորությունները Սպենդիարյանն ստացել էր Սիմֆերոպոլում 1893 թ. ամռանը՝ արտիստուհու ելույթների կապակցությամբ։ Սպենդիարյանը գրում է այն չտեսնված հաջողության մասին, որ ունեցել է մեծ դերասանուհին Ե. Կարպովի «Վաղ աշուն», Ս. Սուվորինի «Տատյանա Ռեպինա» և Գոլդոնիի «Պանդոկապետուհին» պիեսներում։ Սավինայի խաղը Տատյանա Ռեպինայի դերում Սպենդիարյանը համեմատում է Երմոլովայի խաղի հետ, նախապատվություն տալով վերջինիս։ Միաժամանակ նշում է Սավինայի աննման խաղը պանդոկապետուհու դերում։

Սպենդիարյանի գեղագիտական հայացքները արտացոլված են 1894 թ. ապրիլի 12-ի նամակում։ Այս նամակից պարզվում է, որ Էբերլեն վեճի է բռնվել Փարիզի կոնսերվատորիայի մի շարք ուսանողուհիների հետ Մասնեի նորաստեղծ օպերայի մասին, որը, մեր կարծիքով, պետք է լիներ «Տաիս» բավական հայտնի օպերան, քանի որ այդ օպերան է բեմադրվել 1894 թ. սկզբներին։ Էբերլեին դուր է եկել Մասնեի նորաստեղծ օպերան. Սպենդիարյանը ևս համոզված է, որ այդ օպերան գեղարվեստական մեծ արժանիքներ ունի։ «Ես համոզված եմ,— գրում է Սպենդիարյանը,— որ Մասնեի նոր օպերան աչքի է ընկնում այն բոլոր արժանիքներով, որ Դուք նշում եք։ Ինչ վերաբերում է զուտ թեորետիկ կող-

մին, այսինքն գործիքավորմանը, հարմոնիզացիային և այլն, ապա այդ տեսակետից Մասնեն, ինչպես և ֆրանսիական շատ կոմպոզիտորներ, օրինակելի և կատարյալ կոմպոզիտոր է իր տեխնիկայի արտասովոր նրբությամբ»։

Այս նամակում Սպենդիարյանն իր հիացմունքն է հայտնում Սեն-Սանսի «Սամսոն և Դալիլա» օպերայի մասին. «Ամեն ինչ կա այնտեղ,—գրում է Սպենդիարյանը,— և լայնաշունչ մեղեդիներ, և խստաշունչ խմբերգներ և արևելյան օրիգինալ մեղեդիներ, որոնք վկայում են, որ կոմպոզիտորը հիանալի հասկանում է արևելյան երաժշտության ոգին։ Հետաքրքիր է ի՞նչ կարծիք ունեն այս օպերայի մասին Ձեր կոնսերվատորուհիները,— հարցնում է Էբերլեին Սպենդիարյանը։— Ձեմ կարծում, որ նրանք դատապարտեն գործիքավորումը և թեորետիկ անճշտություններ գտնեն Սեն-Սանսի մոտ, որը, չխոսելով նրա ստեղծագործությունների մելոդիականության, նրբության և օրիգինալության մասին, ամենաօրինակելի գործիքագետն է ու ամենակրթված թեորետիկը»։

Սպենդիարյանը միշտ պահպանեց իր սերը Սեն-Սանսի նկատմամբ։

Խոսելով Էբերլեի ընկերուհիների բացասական վերաբերմունքի մասին դեպի ֆրանսիական կոմպոզիտորները, Սպենդիարյանն ընդհանրություն է դրտնում նրանց կարծիքների և ռուսական երաժշտական քննադատ Կաշկինի կարծիքների միջև և քննադատում նաև վերջինիս։ Սպենդիարյանը քննադատում է Կաշկինին այն բանի համար, որ նա՝ գովերգելով ոչ այնքան հռչակավոր ուկրաինական կոմպոզիտոր Կորեշչենկոյի երաժշտությունը, գտնում է, որ Գունոյի «Ֆաուստը» անհրաժեշտ խորություն չունի, որ Գունոն ականավոր կոմպոզիտոր է երկրորդական կոմպոզիտորների մեջ։

Նա իրավացի էր, բարձր գնահատելով վերոհիշյալ ֆրանսիական կոմպոզիտորներին, հատկապես Գունոյին։ Ահա թե ինչպես է արտահայտվել Գունոյի մասին Չայկովսկին։ 1878 թ. դեկտ. 24-ին Ֆոն Մեկկին ուղղված նամակում կարդում ենք. «Ֆաուստը»,— գրում է ռուս մեծ կոմպոզիտորը,— գրված է, եթե ոչ հանճարեղորեն, ապա արտակարգ վարպետությամբ և նշանակալի ինքնատիպությամբ»։

Սպենդիարյանը քննադատում է Կաշկինին նաև այն բանի համար, որ նա Դելիբի, Սպենդիարյանի որակմամբ՝ «հրաշալի, պոետիկ, «Լակմե» օպերան իջեցնում է մինչև «օպերետային երաժշտության մակարդակը»։ Սպենդիարյանը այս նամակում իր բացասական վերաբերմունքն է արտահայտում Արենսկու ու Կորեշչենկոյի նկատմամբ՝ գտնելով որ նրանց ստեղծագործության բովանդակությունը «չոր է, անգույն, ձանձրալի, երբեմն էլ շատ սովորական, որ նրանց հատուկ չէ մելոդիկ հնարամտություն, իսկ նրբության մասին ընդհանրապես ավելորդ է խոսել»։ Իր այս կարծիքը նա կոնկրետացնում է սիմֆոնիկ նվագախմբի համար Արենսկու գրած առաջին սյուիտի օրինակի վրա։

Սպենդիարյանը գտնում է, որ Արենսկու սյուիտն անգույն է, բայց ունի անվիճելի արժանիք, որը՝ նրա գործիքավորման վարպետությունն է։

Ծանոթանալով այս նամակներին, մենք տեսնում ենք, որ դեռևս երիտասարդական շրջանում դրսևորվել են կոմպոզիտորի ինքնուրույնությունը արվեստի երևույթների գնահատման հարցում, նրա նուրբ ճաշակը, էսթետիկական հստակ դիրքավորումները և մարդկային հոգու թանկագին հատկությունները՝ անկեղծությունը, անմիջականությունը, ջերմ սիրտը։